

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«Տեխնոլոգիա 4»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՅՉԻ ՀԱՄԱՐ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 4»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՁԻ ՀԱՄԱՐ

Երևան - 2026

ՀՏԴ

ԳՄԴ

Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Տեխնոլոգիա 4» աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար /Օրդյան Ն.Ա., Պետրոսյան Ս.Ս., Օհանյան Հ.Վ.; Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Էդիթ Պրինտ, 2025. - 20 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13.02.2026 թվականի 219-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Մնացականյան Լ.Ա.

Հեղինակներ՝

Օրդյան Նունե Ալբերտի, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Սյուզաննա Սամվելի
Օհանյան Հասմիկ Վրույրի

Գրախոսներ՝

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ.Յու.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ.Ռ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ.Ա.

Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա.Ռ., Դավթյան Հ. Լ.

Սույն ձեռնարկի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների չորրորդ դասարանի «Տեխնոլոգիա 4» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN

ՀՏԴ

ԳՄԴ



© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	4
«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 4» ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ	6
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	19

ՆԱԽԱԲԱՆ

Սույն մեթոդական ուղեցույցը մշակվել է «Տեխնոլոգիա 4» աշխատանքային գիրք-տետրին կից առաջադրանքների մեթոդական սկզբունքների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դրանց իրականացման առանձնահատկությունների մեկնաբանման և արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով:

Աշխատանքային գիրք-տետրը ներառում է առաջադրանքներ, որոնք համապատասխանում են հանրակրթական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի 4-րդ դասարանի աշխատանքային գիրք-տետրի տրամաբանությանը, ընդգրկում են դասընթացի բոլոր թեմաները և կարող են իրականացվել սովորողների կողմից ինչպես ուսուցչի ուղղորդմամբ կամ աջակցությամբ, այնպես էլ՝ ինքնուրույն: Այս աշխատանքային գիրք-տետրը սովորողներին հնարավորություն կընձեռի ավելի լավ հասկանալ, կրկնել և ամրապնդել դասընթացի նյութը, փորձել սեփական ուժերն ինչպես պարզ, այնպես էլ ավելի բարդ առաջադրանքներ կատարելիս: Առաջադրանքները կառուցված են այնպես, որ լավագույնս արձագանքեն տարբեր առանձնահատկություններ ունեցող սովորողների կրթական կարիքներին:

Յուրաքանչյուր սովորող ունի ուսումնառության իր ոճը, առանձնահատկությունները, կարողություններն ու դժվարությունները: Այդ իսկ պատճառով դասավանդման ընթացքում կարևոր է հաշվի առնել սովորողների բազմազանությունը և ստեղծել այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ բոլորը կկարողանան մասնակցել դասապրոցեսին և առաջադիմել իրենց հնարավորություններին համապատասխան:

Ուսումնական ծրագրի հարմարեցումը միտված է բոլոր սովորողների ներառմանը: Այս շրջանակում ուսուցիչը կարող է.

- սահմանել համապատասխան ուսումնական նպատակներ,
- արձագանքել սովորողների բազմազան կրթական կարիքներին,

- հաղթահարել ուսուցման և գնահատման հնարավոր խոչընդոտները առանձին սովորողների կամ խմբերի համար:

Այս մոտեցումները հնարավորություն են տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար սահմանել տարբեր ուսումնական նպատակներ կամ հարմարեցնել ուսումնական ծրագիրը այնպես, որ վերացվեն խոչընդոտները, և բոլոր սովորողները կարողանան յուրացնել կրթական ծրագիրը:

Կարևոր է ընդգծել, որ նման պլանավորումը պետք է լինի ընդհանուր դասապլանավորման մի մասը, այլ ոչ թե առանձին գործընթաց: Պարտադիր չէ, որ այն լինի բարդ կամ ժամանակատար. ուսուցիչը կարող է դասի պլանում նշել կարճ դիտարկումներ այն մեթոդների և մոտեցումների վերաբերյալ, որոնք կօգնեն նվազեցնել խոչընդոտները տվյալ սովորողների համար: Սովորողի անհատական նպատակները կարող են ուղղորդել այս աշխատանքը: Անհրաժեշտության դեպքում նպատակահարմար է ուսումնական նպատակը բաժանել ավելի փոքր քայլերի կամ կիրառել հավելյալ ռեսուրսներ՝ համագործակցելով ուսուցչի օգնականի կամ մենթորի հետ:

Դասավանդման ընթացքում ուսուցիչը պետք է նաև մտածի, թե ինչպես է ստուգելու սովորողների ընկալումը և ինչ հարցեր է ուղղելու տարբեր խմբերին ու անհատներին: Որոշ սովորողներ կարող են իրենց գիտելիքները և կարողությունները դրսևորել այլ կերպ, ուստի սովորողների կարողությունների լիարժեք բացահայտման համար կարևոր է կիրառել տարբեր միջոցներ:

Այս համատեքստում «Տեխնոլոգիա» առարկան կարող է դառնալ արդյունավետ միջոց ներառական կրթությունը խթանելու համար: Հարմարեցված գիրք-տետրի, տեսողական աջակցության, «քայլ առ քայլ» հանձնարարությունների և գործնական աշխատանքի միջոցով հնարավոր է նվազեցնել դժվարությունները և միաժամանակ զարգացնել յուրաքանչյուր սովորողի ներուժը:

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 4» ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Գծագրության հիմունքներ

Այս թեմայի ուսուցման ընդհանուր նպատակներն են՝

- Սովորողներին ծանոթացնել գծագրական հիմնական գործիքներին և դրանց օգտագործման կանոններին:
- Զարգացնել ձեռքի ճշգրիտ շարժումներ, ուղղաձիգ և թեք գծեր գծելու հմտություններ:
- Ստեղծել տարրական երկրաչափական պատկերներ՝ զարգացնելով տարածական մտածողությունը:
- Ծանոթացնել մասշտաբի գաղափարին երեխային հասկանալի, պարզ օրինակներով:

Առաջադրանք 1. Յուրաքանչյուր գծագրական գործիքի տակ գրիր ճիշտ անվանումը (քանոն, մատիտ, ռետին, անկյունակ, կարկին):

Այս առաջադրանքի նպատակն է երեխաների մոտ ձևավորել որոշակի գիտելիքներ գծագրական հիմնական գործիքների մասին, զարգացնել դիտողական հիշողությունն ու գործիքները միմյանց հետ համեմատելու կարողությունը:

Ուսուցիչը սկզբից ցույց է տալիս բոլոր գործիքները հերթականությամբ և բացատրում դրանց հիմնական գործառույթները: Այնուհետև նա 5-7 րոպե ժամանակ է տրամադրում, որպեսզի սովորողներն ուսումնասիրեն գործիքները, որից հետո առաջարկում է նրանց տետրի մեջ լրացնել բաց թողնված անվանումները՝ քանոն, մատիտ, ռետին, անկյունակ, կարկին:

Այս առաջադրանքը զարգացնում է տրամաբանական մտածողությունը, ուշադրությունը, դիտողականությունը, ինչպես նաև որոշակի գործողություններ կատարելու համար համապատասխան գործիք ընտրելու հմտությունները: Դժվարություններից խուսափելու

համար առաջադրանքի պահանջի մեջ տրված են հուշող բառեր: Ընկալումն ամրապնդելու համար կարելի է ցույց տալ իրական առարկաները և առաջարկել, որ սովորողները շոշափեն և դրանցով տարբեր գործողություններ կատարեն՝ կապեր ստեղծելով իրենց փորձառությունների հետ:

Առաջադրանք 2. Քանոնի, անկյունակի և մատիտի օգնությամբ գծիր կետագծերով տրված պատկերները:

Այս առաջադրանքի նպատակն է զարգացնել ձեռքի ճշգրիտ շարժումներ կատարելու, ուղղաձիգ և թեք գծեր գծելու հմտություններ: Առաջադրանքի կատարումը նպաստում է նաև մատների մկանների զարգացմանը:

Տետրի մեջ կետիկներով տրված են 4 պարզ պատկերներ, որոնք բաղկացած են ուղղաձիգ և հորիզոնական գծերից: Սովորողը քանոնի, անկյունակների և մատիտի օգնությամբ պետք է կետագծերի վրայով գծեր տանի: Եթե սովորողը դժվարանա կատարել առաջադրանքը, ապա կարող են աշխատել զույգերով՝ դասընկերը կետագծերի ուղղությամբ կպահի քանոնը, իսկ երեխան մատիտով կգծի դրանց վրայով:

Առաջադրանք 3. Քանոնի, կարկինի և մատիտի օգնությամբ գծիր երկրաչափական պատկերներից կազմված գծագիրը:

Այս առաջադրանքն իր կատարմամբ նման է նախորդին, մի տարբերությամբ՝ այստեղ գործածվում է նաև կարկին: Ուսուցիչը առաջադրանքը հանձնարարելուց առաջ ցույց է տալիս կարկինի ճիշտ օգտագործման ձևը, բացատրում գործիքից օգտվելու անվտանգության կանոնները, այն է՝ զգուշանալ սուր ծայրից: Եթե սովորողը դժվարանա կատարել առաջադրանքը, ապա կարող են աշխատել դասընկերոջ հետ միասին: Դասընկերը կարկինով կգծի

շրջանագիծը, իսկ նա քանոնի և մատիտի օգնությամբ կգծի ուղիղ գծերը:

Առաջադրանքը նպաստում է տրամաբանական մտածողության, ուշադրության և դիտողականության զարգացմանը:

Առաջադրանք 4. Տրված են երկրաչափական պարզ պատկերներ՝ քառակուսի և եռանկյուն: Կիրառիր 2:1 և 1:2 մասշտաբ:

Այս առաջադրանքի հիմնական նպատակն է սովորողներին ծանոթացնել մասշտաբի գաղափարին պատկերների մեծացման և փոքրացման պարզ, հասկանալի օրինակներով: Ուսուցիչը գրատախտակին գծում է 2 ուղղանկյուն՝ մեկը մեծ, մյուսը՝ փոքր, և ասում. «Եթե նկարում ուղղանկյան կողմը 1 սմ է, իսկ իրականում՝ 2 սմ, ապա դա ինչ է նշանակում: Դա նշանակում է, որ ուղղանկյունը նկարում 2 անգամ փոքրացվել է, այսինքն այն գծված է 1:2 մասշտաբով»:

Եթե երեխաները դժվարանում են, թույլ տվեք աշխատել զույգերով (մեկը պահում է քանոնը, մյուսը՝ գծում):

Առաջադրանք 5. Նայիր պատկերներին և պլաստիլինով պատրաստիր քո նախընտրած պատկերը փոքր մասշտաբով:

Այս առաջադրանքի նպատակն է ամրապնդել մասշտաբի գաղափարի մասին գիտելիքները, զարգացնել մատների շարժունությունը և առարկաների տարածական ընկալումը: Ուսուցիչը նախ առաջարկում է դիտել պատկերները և ընտրել դրանցից մեկը, որը երեխային կթվա ամենահեշտը: Ապա հանձնարարում է պլաստիլինից պատրաստել այն ավելի փոքր չափերով:

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Առաջադրանք 6. Նայիր նկարին և ասա՛, թե ինչ նյութից են պատրաստված այստեղ պատկերված տարբեր առարկաները: Գրիր նյութի անվանումը համապատասխան վանդակների մեջ:

Հուշող բառեր՝ ապակի, մետաղ, քար, կաշի, կտոր, փայտ:

Թեմայի նպատակն է ձևավորել գիտելիքներ տարբեր նյութերի մասին, զարգացնել առօրյա նյութերի տեսակները տարբերելու հմտություններ:

Ուսուցիչը, ցուցադրելով տարբեր նյութերից պատրաստված իրական առարկաներ, պատմում է շրջապատում հանդիպող նյութերի մասին՝ փայտ, քար, մետաղ, պլաստիկ, ապակի և այլն: Այնուհետև նա ցույց է տալիս առաջադրանքի նկարներն ու ընթերցում հուշող բառերը, որից հետո առաջարկում է վանդակների մեջ լրացնել ճիշտ անունները:

Առաջադրանքի կատարումը նպաստում է ուշադրության ձևավորմանը, զարգացնում վերլուծական մտածողությունը:

Առաջադրանք 7. Թղթից պատրաստիր ծիծեռնակ:

Առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ է մկրատով եզրագծերով կտրել ծիծեռնակի փռվածքը, ապա նշված գծերով ծալելով ստանալ ծիծեռնակի մոդել: Ստացված մոդելը «կարող է սավառնել»:

Այս առաջադրանքը զարգացնում է ուշադրությունը, երևակայությունը, պատկերացումը և տրամաբանությունը: Եթե երեխան դժվարանա ամբողջովին ինքնուրույն կատարել առաջադրանքը, ապա կարող է խնդրել դասընկերոջը, որ նա մկրատով կտրի ծիծեռնակի պատկերը: Այս և նմանատիպ առաջադրանքների կատարման ժամանակ խորհուրդ է տրվում ցույց տալ՝ մոդելավորել աշխատանքի օրինակը, որպեսզի սովորողը ավելի լավ յուրացնի քայլերի հաջորդականությունը: Մեծ դժվարությունների

դեպքում կարելի է տրամադրել աշխատանքի կատարման քայլաշարհի հուշում կամ առաջարկել կատարել այն մաս-մաս:

Առաջադրանք 8. Պատրաստիր օրիգամի բաղիկ քայլերի նշված հաջորդականությամբ:

Առաջադրանքում բերված են իրական բաղիկի և օրիգամի բաղիկի պատկերները: Նպատակն է երեխայի մոտ ձևավորել համեմատելու և նմանություն գտնելու կարողություն: Առաջադրանքը կատարելու համար հարկավոր է ունենալ քառակուսի գունավոր թուղթ: Քայլերի հաջորդականությունը մանրամասն բերված է գիրք-տետրում: Սովորողը, նկարներով ուղղորդվելով, ծալում է թուղթը:

Առաջադրանքը նպաստում է տարածական պատկերացման զարգացմանը: Անհրաժեշտության դեպքում կարելի է մի քանի անգամ կրկնել քայլերի հաջորդականությունը կամ ֆիզիկապես ուղղորդել սովորողին:

Առաջադրանք 9. Քայլերի նշված հաջորդականությամբ թղթից պատրաստիր եռաչափ մրգեր: Դրանցից հավաքիր կոմպոզիցիա:

Այս աշխատանքի կատարման համար սովորողն օգտագործում է հավելվածի կաչուն նկարները: Հավելվածում յուրաքանչյուր մրգի համար տրված են 6 միանման նկարներ, որոնց մեջտեղում նշված է ծալքի գիծը: Հարկավոր է մկրատով եզրագծով կտրել այդ նկարները, ծալել գծով, ապա կաչուն մասով ամրացնել միմյանց այնպես, որ ստացվեն նկարում պատկերված եռաչափ մրգերի նման:

Այս առաջադրանքը նպաստում է երևակայության և տրամաբանության զարգացմանը, պարզ աշխատանքային գործողությունների կատարելու հմտությունների ձևավորմանը, մատների մանր շարժունակության զարգացմանը: Մանր շարժունակության դժվարություն ունեցող սովորողների համար կարելի է ավելի շատ ֆիզիկական հուշումներ և աջակցություն ապահովել:

Առաջադրանք 10. Պատրաստիր փաթեթավորում փոքրիկ նվերների համար:

Առաջադրանքի հաջորդ էջից հարկավոր է մկրատով կտրել պատկերները, վերցնել կոնֆետներ կամ այլ փոքր իրեր (օրինակ՝ գրիչ, մատիտ), սոսնձով կամ կպչուն ժապավենով ամրացնել կենդանիների վրա և, դրանց ձեռքերի հատվածները ծալելով, ստանալ փաթեթավորված փոքրիկ նվերներ: Այս առաջադրանքը կատարելիս կարելի է ներգրավել դասարանի մյուս աշակերտներին՝ մկրատով եզրագծերով կտրելու համար:

Այս առաջադրանքի նպատակն է սովորողի մոտ զարգացնել պարզ աշխատանքային գործողություններ կատարելու հմտությունները, զարգացնել մատների մկանները: Կարևոր է, որ սովորողները ուշադրություն դարձնեն առաջադրանքների այն մասերին, որոնք իրենց մոտ դժվար են ստացվում, ինչպես նաև սովորեցնել օգնություն խնդրել, երբ դրա անհրաժեշտությունն ունեն:

Առաջադրանք 11. Սովարաթղթից տուփ: Մկրատով կտրիր տուփի փռվածքը: Գունավորիր այն ամբողջությամբ և հավելվածի պատկերներով գեղեցիկ ձևավորիր: Ծալիր նշված տեղերից: Սոսնձիր եզրերից և ստացիր պատրաստի տուփ:

Առաջադրանքը կատարվում է տետրի մեջ գծված փռվածքի և Հավելված 2-ի օգնությամբ: Գծագրի վրա պայմանական նշաններով նշված են սոսնձվող մասերը: Հարկավոր է մկրատով եզրագծերով կտրել փռվածքը, ապա մատիտների կամ ներկերի օգնությամբ գունավորել, վրան նախշեր ամրացնել՝ բերելով հավելվածից, ծալել ու սոսնձել:

Այս առաջադրանքի նպատակն է երեխայի մոտ զարգացնել պարզ աշխատանքային գործողություններ կատարելու հմտությունները, զարգացնել մատների մկանները:

Առաջադրանք 12. Թղթից մատնային տիկնիկներ:

Առաջադրանքը կատարվում է գիրք-տետրի 24-րդ էջում կետագծերով գծված տիկնիկների հիմքերի պատկերների և Հավելված 3-ի օգնությամբ: Սովորողը կարող է պատրաստել մատնային տիկնիկների 6 կերպարներ, որի համար գիրք-տետրի 24-րդ էջի պատկերները մկրատով եզրագծով կտրվում են, վրան ամրացվում Հավելված 3-ի պատկերները: Ապա ստացված ամբողջական պատկերի ներքևի հատվածը հետևի կողմից կաչուն ժապավենով ամրացվում է մատի չափով: Ստացվում են տարբեր կերպարների մատնային տիկնիկներ, որոնցով երեխաները կարող են բեմադրել ներկայացում:

Առաջադրանք 13. Խոհանոցի կահավորում: 35-րդ էջից մկրատով կտրի՛ր խոհանոցի կահավորման առանձին մասերի փռվածքները, ծալի՛ր և սոսնձի՛ր նշված մասերից: Ստացված մասերը նույնպես սոսնձի՛ր 33-րդ էջի՝ կետագծերով նշված մասերում և ստացի՛ր կահավորված խոհանոց:

Առաջադրանքը կատարվում է գիրք-տետրի էջերում բերված պատկերներով, որոնք հարկավոր է եզրագծերով կտրել մկրատով: Խոհանոցի ամբողջական պատկերը հավաքվում է 33-րդ էջի վրա: Առաջադրանքը ձևավորում է տարրական աշխատանքային հմտություններ, զարգացնում տրամաբանությունը, երևակայությունը, ստեղծագործական ունակությունները: Եթե երեխան դժվարանա ինքնուրույն կատարել առաջադրանքը, ապա որոշ գործողություններ կարող է կատարել ուսուցչի օգնականի կամ դասընկերների հետ:

Առաջադրանք 14. Թելերից պատրաստի՛ր գնդիկներ և դրանցով պատրաստի՛ր կրիա:

Առաջադրանքը կատարելու համար հարկավոր է մի փոքր հաստ թել և մկրատ: Նկարում պատկերված քայլերի հաջորդականությամբ

թելից պատրաստվում է գնդիկ, որը սոսնձի կամ երկկողմանի կաշուն ժապավենի օգնությամբ ամրացվում է գիրք-տետրի 32-րդ էջում բերված կրիայի պատկերի վրա: Հարկավոր է սկզբից մկրատի օգնությամբ եզրագծով կտրել կրիայի պատկերը: Եթե երեխան չկարողանա ինքնուրույն կատարել այս առաջադրանքը, ապա կարող է դիմել ուսուցչի օգնականի աջակցությանը և, հետևելով ընթացքին, կատարել աշխատանքի որոշ մասերը միայն, օրինակ՝ կարող է կապել հանգույցները, գնդիկը ամրացնել կրիայի մարմնին:

Այս առաջադրանքը զարգացնում է ուշադրությունը, երևակայությունը, պատկերացումը, ձևավորում պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ:

ԴԻՉԱՅՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՇԵՍՆԵՐ

Դասի սկզբում ուսուցիչը պատմում է Հայաստանում հնուց ի վեր տարածված կիրառական արվեստի տարբեր ճյուղերի՝ հատկապես գորգագործության և կարպետագործության մասին: Ցուցադրում է հայկական գորգերում օգտագործված զարդանախշերի տեսակներ, որոնք լայնորեն կիրառվել են նաև կարպետագործության, քանդակագործության, մանրանկարչության, ճարտարապետության, արծաթագործության մեջ: Նյութը առավել ընկալելի դարձնելու համար կարելի է օգտագործել տեսանյութեր, մուլտֆիլմեր կամ հատվածներ ֆիլմերից, և այլն: Օրինակ՝ կարելի է օգտագործել դրվագներ «Անահիտ» կամ «Վիշապագորգ» մուլտֆիլմերից:

Առաջադրանք 15. Հավելվածի և գունավոր մատիտների օգնությամբ սափորը ձևավորիր հայկական զարդանախշերով:

Առաջադրանքը կատարվում է գունավոր մատիտներով կամ ներկերով, ինչպես նաև Հավելված 4-ի զարդանախշերի օգնությամբ: Ուսուցիչը կարող է առաջարկել սովորողին սափորը ձևավորելու համար օգտագործել նաև ծեփոն և բնական տարբեր նյութեր:

Այս առաջադրանքը զարգացնում է ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, պատկերացումը, մատների մանր շարժունակությունը: Այն ձևավորում է նաև պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ:

Առաջադրանք 16. Գունավոր թելերի և սոսնձի օգնությամբ ձևավորիր կարպետը հայկական զարդանախշերով:

Այս առաջադրանքի կատարման համար հարկավոր են հաստ թելեր՝ կարմիր, կապույտ, դեղին, ինչպես նաև սոսինձ և մկրատ: Թելերը մկրատով կտրատում են մանր մասնիկների, որոնք սոսնձվում են գիրք-տետրի 37-րդ էջի պատկերի համապատասխան մասերում:

Առաջադրանքը զարգացնում է պատկերացումը, մատների մանր շարժունակությունը և ձևավորում պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ:

Առաջադրանք 17. Փափուկ և չորացող ծեփոններից պատրաստիր դեկորատիվ իրեր: Կարող ես օգտվել նկարում պատկերված կախազարդերից:

Առաջադրանքը կատարվում է նկարում պատկերված փափուկ կամ, այսպես կոչված, «թեթև» ծեփոններից, որոնք, օդում որոշ ժամանակ մնալուց հետո չորանալով, պահպանում են տրված ձևը: Նկարում բերված են կախազարդերի տարբեր օրինակներ: Դրանցից մեկը պատրաստելով դասարանում՝ ուսուցիչը կարող է ցուցադրել կատարման հաջորդականությունը, ապա առաջարկել, որ սովորողն ինքնուրույն պատրաստի իր նախընտրած ձևով:

Այս առաջադրանքը զարգացնում է մատների մանր շարժունակությունը, երևակայությունը և ստեղծագործական ունակությունները:

Առաջադրանք 18. Ծեփոնից բանջարեղեն:

- Ա) Կաղամբ
- Բ) Եգիպտացորեն
- Գ) Պղպեղ
- Դ) Գազար
- Ե) Ոլոռ

Այս առաջադրանքը կարելի է կատարել ցանկացած տեսակի ծեփոնով: Երեխան կարող է օգտագործել նաև նախորդ առաջադրանքում օգտագործվող ծեփոնի տեսակը: Առաջադրանքը կարելի է կազմակերպել զույգով: Սովորողներից մեկը կարող է ծեփոնից առանձին մասնիկները պատրաստել, իսկ մյուսը՝ ձևավորել ամբողջական պատկերները: Այս առաջադրանքի նպատակն է նպաստել սովորողների մանր շարժունակության զարգացմանը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ, զարգացնել ստեղծագործական կարողությունները և երևակայությունը: Կարելի է օգտագործել նաև իրական բանջարեղեն՝ ուսումնասիրվող նյութն առավել ակնառու դարձնելու նպատակով:

Առաջադրանք 19. Աշխատանք փայլաթիթեղով: Վերցրու մի կտոր փայլաթիթեղ և փորձիր դրանից պատրաստել տարբեր առարկաներ:

- ա) Ծառ
- բ) Թիթեռ

Այս առաջադրանքը կատարվում է փայլաթիթեղով: Նկարներում բերված են աշխատանքի կատարման հաջորդական քայլերը: Սովորողը մկրատի օգնությամբ փայլաթիթեղից կտրում է տարբեր չափերի մասնիկներ, դրանք մատներով ոլորելով՝ ստանում է ձողեր, որոնցով պատրաստվում է ծառ:

Այս առաջադրանքի նպատակն է նպաստել սովորողների մանր շարժունակության զարգացմանը, ձևավորել տարբեր նյութերով

աշխատելու կարողություններ, պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ, զարգացնել ստեղծագործական կարողությունները և երևակայությունը:

Առաջադրանք 20. Ապիկացիա: Հաջորդ էջի վրա հավաքիր այս ապիկացիան տերևների և ճյուղերի միջոցով: Ծեփոնից պատրաստի՛ր մրջյուններ և ամրացրո՛ւ իրենց տեղերում:

Առաջադրանքը կատարելու համար ուսուցիչը նախորոք հանձնարարում է երեխաներին հավաքել աշնանային չոր ճյուղեր ու տերևներ: Աշխատանքը կատարելու համար հարկավոր է նաև մկրատ և ծեփոն: Գիրք-տետրի 45-րդ էջում կետագծերով բերված է ապիկացիայի ամբողջական պատկերը: Աշխատանքը կատարելուց առաջ այդ էջը մկրատով կտրվում է: Սկզբից հարկավոր է մի քանի տերևներ մկրատով մանր կտրտել, ապա ծեփոնի օգնությամբ ամրացնել նախատեսված տեղում: Վերջում ծեփոնից գնդիկներ են պատրաստում և դրանցից հավաքում մրջյունների պատկերները:

Եթե սովորողը դժվարանա առաջադրանքը կատարել ինքնուրույն, ապա կարելի է աշխատանքը կազմակերպել զույգով: Երեխաներից մեկը կարող է մկրատով տերևները կտրտել և ծեփոնից գնդիկները պատրաստել, իսկ մյուսը՝ ձևավորել ամբողջական ապիկացիան: Այս առաջադրանքի նպատակն է նպաստել սովորողների մանր շարժունակության զարգացմանը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ, զարգացնել ստեղծագործական կարողությունները և երևակայությունը:

ՀԱԳՈՒՍՏԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ

Առաջադրանք 21. Գունավոր մատիտներով ներկիր հայկական ազգային հագուստի գծանկարը: Նշիր, թե հայկական տարազում օգտագործվող գույներն ինչ են խորհրդանշում:

Այս թեմայի դասավանդման հիմնական նպատակը ազգային արժեքների ճանաչումն է՝ հայկական ազգային հագուստի մասին պատկերացում կազմելը:

Ուսուցիչը կարճ զրույցի օգնությամբ պատմում է Հայաստանի տարբեր գավառների ազգային հագուստի՝ տարազի մասին: Նա ցուցադրում է նկարներ և երեխաների ուշադրությունը հրավիրում հատկապես գույների ու զարդանախշերի վրա: Ուսուցիչը ներկայացնում է հայկական տարազում օգտագործվող գույների հատուկ նշանակությունը և առաջարկում գունավոր մատիտներով ներկել գիրք-տետրի 48-րդ էջի հագուստի նկարը: Վերջում հարցերի օգնությամբ պարզում է, թե արդյոք երեխաները հիշում են՝ որ գույնը ինչ է խորհրդանշում:

Այս առաջադրանքը զարգացնում է ճաշակ, գունային մտածողություն, ազգային արժեքների ճանաչում:

Առաջադրանք 22. Կտորից տիկնիկ:

Առաջարկվում է այս առաջադրանքը կատարել զույգերով: Գիրք-տետրի 49-րդ էջում բերված են անհրաժեշտ նյութերն ու գործիքները, իսկ 50-րդ էջում՝ պատրաստման հաջորդական քայլերը:

Այս առաջադրանքի նպատակն է նպաստել սովորողների մատների մանր շարժունակության զարգացմանը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ, զարգացնել ստեղծագործական կարողությունները և երևակայությունը:

Առաջադրանք 23.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ: ԲԱՑԻԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Կատարիր հետազոտություն: Հարցրո՛ւ ընկերներիդ, բարեկամներիդ, ընտանիքիդ անդամներին թե ինչպիսի բացիկներ են սիրում: Պատրաստիր բացիկ և նվիրիր քո ընկերներից մեկին: Բացիկների համար կարող ես օգտագործել 52, 54, 56-րդ էջերի շրջանակները և հավելվածի նկարները:

- ա) Ամանորյա բացիկ
- բ) Ծննդյան օրվա բացիկ
- գ) Գարնանային տոների բացիկ

Այս աշխատանքը նախատեսված է ինքնուրույն կատարման համար: Գիրք-տետրի 52, 54, 56-րդ էջերում կան գեղեցիկ շրջանակներ, որոնք մկրատով եզրագծերով կտրելով՝ երեխան կարող է պատրաստել տարբեր թեմաներով բացիկներ: Հավելվածում կան համապատասխան պատկերներ, որոնց օգնությամբ նա կարող է գեղեցիկ ձևավորել բացիկները:

Առաջադրանքը ձևավորում է տարրական աշխատանքային հմտություններ, զարգացնում տրամաբանությունը, երևակայությունը, ստեղծագործական ունակությունները և ինքնուրույնությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Տեխնոլոգիա» առարկայի 1-6-րդ դասարանների առարկայական չափորոշիչ, 04.04.2023 թ.:
2. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Տեխնոլոգիա» առարկայի 4-րդ դասարանի ծրագիր / Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 15.05.2024թ.:
3. Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերոյան, Տեխնոլոգիա – 4, դասագիրք հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի համար, «Տիգրան Մեծ», 2020 թ.:
4. Տեխնոլոգիա: Չորրորդ դասարան / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերոյան- Եր.: «Տիգրան Մեծ», 2025.- 72 էջ:
5. Տեխնոլոգիա 4-րդ դասարան, մեթոդական ուղեցույց / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերոյան, «Տիգրան Մեծ», 2025 թ., 100 էջ:
6. How Design and Technology can be Used to Meet the Needs of P upils with Autism at Key S tage 2 - the Challenges and Potential; DOI: <https://scispace.com/pdf/how-design-and-technology-can-be-used-to-meet-the-needs-of-3uarfittlv.pdf>
7. QCA, 2009, Planning, Teaching and Assessing the Curriculum for Pupils with Learning Difficulties: Design and technology; DOI: www.qcda.gov.uk/libraryAssets/media/P_scales_Design.pdf

Էլեկտրոնային ռեսուրսներ

www.data.org.uk

Օրդյան Ն.Ա., Պետրոսյան Ս.Ս., Օհանյան Հ.Վ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 4»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 70:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում:
Երևան, Դ. Մալյան 43